Հանձնաժողովը կարող է ստուգել մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը՝ օգտագործելով պաշտոնական աղբյուրներից ստացված տվյալներ կամ դրա մասին ստանալով իրավասու մարմինների գրավոր եզրակացությունը։ Նման հարցում ուղարկվելու դեպքում համապատասխան պետական և տեղական ինքնակառավարման մարմինները հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում են գրավոր եզրակացություն։ Եթե մասնակցի ներկայացրած տվյալների իսկության ստուգման արդյունքում տվյալները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է։

- 8.21 Սույն իրավերի 1-ին մասի 8.20 կետի կիրառման նպատակով կարող է իրավիրվել հանձնաժողովի արտահերթ նիստ։
- 8.22 Մինչև պայմանագիր կնքելը պատվիրատուն տեղեկագրում հրապարակում է հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին ոչ ուշ, քան ընտրված մասնակցի մասին որոշման ընդունմանը հաջորդող առաջին աշխատանքային օրը։ Պայմանագիր կնքելու մասին որոշումը պարունակում է ամփոփ տեղեկատվություն հայտերի գնահատման և ընտրված մասնակցի ընտրությունը հիմնավորող պատճառների մասին ու հայտարարություն անգործության ժամկետի վերաբերյալ։
- 8.23 Անգործության ժամկետը պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվա և պատվիրատուի կողմից պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման օրվա միջև ընկած ժամանակահատվածն է։

Անգործության ժամկետը սույն ընթացակարգի դեպքում «10» օրացուցային օր է։ Անգործության ժամկետը կիրառելի.

- չէ, եթե միայն մեկ մասնակից է հայտ ներկայացրել, որի հետ կնքվում է պայմանագիր,
- է նաև այն դեպքում, երբ միայն մեկ մասնակից է հայտ ներկայացրել, և այն մերժվել է։ Սույն կետի կիրառման դեպքում անգործության ժամկետը սահմանվում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարությամբ։

Պատվիրատուն պայմանագիրը կնքում է, եթե սույն կետով նախատեսված անգործության ժամկետում որևէ մասնակից չի բողոքարկում պայմանագիր կնքելու մասին որոշումը։ Մինչև անգործության ժամկետը լրանալը կամ առանց պայմանագիր կնքելու կամ գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարության հրապարակման կնքված պայմանագիրն առ ոչինչ է։

#### 9. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՈՒՄԸ

- 9.1 Պայմանագիր կնքվում է հանձնաժողովի որոշման հիման վրա՝ պատվիրատուի կողմից։ Պայմանագիրը կնքվում է գրավոր՝ մեկ փաստաթուղթ կազմելու միջոցով։
- 9.2 Սույն իրավերի 1-ին մասի 8.23 կետով սահմանված անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորրորդ աշխատանքային օրը պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը։ Ընդ որում, պայմանագիրը կարող է կնքվել ոչ շուտ, քան սույն իրավերի 1-ին մասի 8.23 կետով սահմանված անգործության ժամկետը լրանալու օրվան հաջորդող չորրորդ աշխատանքային օրը։
- 9.3 Ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը հանձնաժողովի քարտուղարը տրամադրում է էլեկտրոնային եղանակով։ Ընդ որում պայմանագրում ներառվում է ընտրված մասնակցի կողմից հայտով ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը։
- 9.4 Եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո ՝ սույն հրավերի 10.1 կետով նախատեսված ժամկետում, իսկ կնքվելիք պայմանագրի նախագծով կանխավճար նախատեսված լինելու դեպքում՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում որակավորման և պայմանագրի ապահովումները, իսկ կնքվելիք պայմանագրի նախագծով կանխավճար նախատեսված լինելու և ընտրված մասնակցի կողմից այդ պայմանն ընդունվելու դեպքում նաև կանխավճարի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից։

ւ Մույն նախադասությունը հրավերից հանվում է, եթե գնման ընթացակարգը չի կազմակերպվում չափաբաժիններով։

Ընդ որում ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը պատվիրատուին ներկայացվում է գրավոր և դրա ներկայացման գրությունը հաշվառվում է պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում։ Պատվիրատուի ղեկավարի կողմից պայմանագրի նախագիծը հաստատվում է այդ իրավասության առաջացմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում և հաստատմանը հաջորդող աշխատանքային օրը ուղեկցող գրությամբ տրամադրվում է ընտրված մասնակցին։

9.5 Մինչև սույն հրավերի 1-ին մասի 9.4 կետով նախատեսված ժամկետի ավարտը, կողմերի համաձայնությամբ, կարող են պայմանագրի նախագծում կատարվել փոփոխություններ, սակայն դրանք չեն կարող հանգեցնել գնման առարկայի բնութագրերի փոփոխմանը, կանխավճարի չափի կամ ընտրված մասնակցի առաջարկած գնի ավելացմանը։

#### 10. ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՊԱՀՈՎՈՒՄՆԵՐԸ

10.1 Որակավորման և պայմանագրի ապահովումները ներկայացնելու պահանջի հիման վրա, այն ստանալու օրվանից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում, ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել որակավորման և պայմանագրի ապահովումներ։ Եթե ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի ձևով, ապա սույն կետով նախատեսված ժամկետը սահմանվում է 10 աշխատանքային օր։ Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է որակավորման և պայմանագրի (կանխավճարի) ապահովումները։8

10.2 Որակավորման ապահովման չափը հավասար է սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի գնման գնի 15 տոկոսին։ Եթե ապրանքի գնման գինը պակաս է կնքվելիք պայմանագրի գնից, ապա որակավորման ապահովման չափը հաշվարկվում է պայմանագրի գնի նկատմամբ։ Որակավորման ապահովումը ներկայացվում է տուժանքի (հավելված 4.2) կամ կանխիկ փողի, կամ բանկերի կողմից տրամադրված երաշխիքների ձևով։ Ընդ որում ապահովումը պետք է վավեր լինի առնվազն մինչև պայմանագրի կատարման արդյունքը պատվիրատուի կողմից ամբողջական ընդունվելու օրվան հաջորդող 20-րդ աշխատանքային օրը ներառյալ<sup>9</sup>

Եթե գնման ընթացակարգը կազմակերպված է չափաբաժիններով և մասնակիցը ընտրված մասնակից է ճանաչվում մեկից ավելի չափաբաժինների մասով, ապա կարող է ներկայացնել՝ ինչպես յուրաքանչյուր չափաբաժնի համար առանձին, այնպես էլ մեկ որակավորման ապահովում՝ բոլոր չափաբաժինների համար։ Մեկ որակավորման ապահովում ենրկայացվելու դեպքում դրա գումարը հաշվարկվում է ներկայացված չափաբաժինների գնման գների հանրագումարի նկատմամբ ՝ հաշվի առնելով Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «գ» պարբերության պահանջները։ Կանխիկ փողի ձևով ներկայացված որակավորման ապահովումը պետք է փոխանցվի Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված «900008000698» գանձապետական հաշվին։

Որակավորման ապահովումը այն ներկայացնողին վերադարձվում է պայմանագրի կատարման արդյունքը պատվիրատուի կողմից ամբողջական ընդունվելուն հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում։

Եթե պայմանագրի կատարումը փուլային է և յուրաքանչյուր փուլի կատարումը ուղղակիորեն փոխկապակցված չէ պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան ստացվելիք վերջնարդյունքի հետ, ապա յուրաքանչյուր փուլի արդյունքը պատվիրատուի կողմից ընդունվելուց հետո որակավորման ապահովման գումարը նվազեցվում է այդ փուլի գումարի նկատմամբ հաշվարկված համամասնությամբ։

Բանկային երաշխիքի ձևով որակավորման ապահովումը ընտրված մասնակիցը ներկայացնում է հավելված 4-ի կամ հավելված 4.1-ի համաձայն:<sup>12</sup>

<sup>8 10.1</sup> կեպից հանվում է «< Եթե ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի ձևով, ապա սույն կետով նախատեսված ժամկետը սահմանվում է 10 աշխատանքային օր:>> նախառատությունը.

<sup>-</sup>եթե գնման հայտով տվյալ չափաբաժնի գնման գինը չի գերազանցում գնումների բազային միավորի քսանհինգապատիկը և նախատեսված չէ կանխավճար

<sup>-</sup> ընթացակարգը կազմակերպվում է «Գնումների մասին» << օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, բացառությամբ այն դեպքի, երբ ընթացակարգը կազմակերպելու համար անհրաժեշտ գնման հայտը հաստատվելու օրվա դրությամբ նախատեսված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է 25 մլն. << դրամը և կնքվելիք պայմանագրի ամբողջական կատարման համար հետագայում ևս պահանջվելու են ֆինանսական միջոցներ, կամ երբ գնման հայտը հաստատվելու օրվա դրությամբ նախատեսված ֆինանսական միջոցներ, դրամիայի տրամադրում։

<sup>&</sup>lt;sup>9</sup> Եթե գնման հայտով տվյալ չափաբաժնի գնման գինը.

<sup>-</sup> չի գերազանցում գնումների բազային միավորի քասնիինգապատիկը,ապա սույն պարբերությունից հանվում են << կամ բանկերի կողմից տրամադրված երաշխիքների >> բառերը

<sup>—</sup> չի գերազանցում գնումների բազային միավորի ութսունապատիկը, բայց ավելի է քսանիինգապատիկից, ապա սույն պարբերությունից հանվում են << ւրուժանքի (հավելված 4.2) կամ >> բառերը, իսկ <<20>> թիվը փոխարինվում է <<90>> թվով,

<sup>–</sup> գերազանցում է գնումների բազային միավորի ութսունապատիկը, ապա սույն պարբերությունից հանվում է << տուժանքի (հավելված 4.2) կամ >> բառերը, <<15>> թիվը փոխարինվում է <<30>> թվով, իսկ <<20>> թիվը՝ <<90>> թվով, <sup>12</sup> եթե՝

<sup>-</sup> տվյալ ընթացակարգի շրջանակում չի կիրառվում 10.2 կետի 4-րդ պարբերությամբ սահմանված կարգավորումը, ապա տվյալ պարբերությունը հանվում է հրավերից, իսկ 5-րդ պարբերությունից հանվում է "կամ հավելված 4.1" բառերը.

Ընդ որում, եթե ապրանքների գնման պայմանագրերը կնքվում են Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա առկա ֆինանսական հատկացումների շրջանակում տվյալ տարվա համար կնքված համաձայնագրի (համաձայնագրերի) մասով ներկայացված որակավորման ապահովումը ենթակա է վերադարձման այդ համաձայնագիրը (համաձայնագրերը) կատարողի կողմից ողջ ծավալով պատշաճ կատարվելու և դրա արդյունքը պատվիրատուի կողմից ամբողջական ընդունվելու դեպքում։

Որակավորման ապահովումը չի վերադարձվում, եթե այն ներկայացրած անձը խախտում է պայմանագրով նախատեսված պարտավորություն, որը հանգեցնում է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը։

10.3. Պայմանագրի ապահովման չափը կազմում է գնման գնի 10 տոկոսը։ Եթե պայմանագրի նախագծով նախատեսված ապրանքների գնման գինը պակաս է կնքվելիք պայմանագրի գնից, ապա պայմանագրի ապահովման չափը հաշվարկվում է պայմանագրի գնի նկատմամբ։ Պայմանագրի ապահովումը ներկայացվում է բանկային երախիքի (հավելված 5) կամ կանխիկ փողի ձևով։<sup>13</sup>

Եթե գնման ընթացակարգը կազմակերպված է չափաբաժիններով և մասնակիցը ընտրված մասնակից է ճանաչվում մեկից ավելի չափաբաժինների մասով ապա կարող է ներկայացնել՝ ինչպես յուրաքանչյուր չափաբաժնի համար առանձին, այնպես էլ մեկ պայմանագրի ապահովում՝ բոլոր չափաբաժինների համար։ Մեկ պայմանագրի ապահովում ներկայացվելու դեպքում դրա գումարը հաշվարկվում է ներկայացված չափաբաժինների գնման գների հանրագումարի նկատմամբ՝ հաշվի առնելով Կարգի 32-րդ կետի 9-րդ ենթակետի պահանջները։

Պայմանագրի ապահովումը պետք է վավեր լինի առնվազն մինչև կնքվելիք պայմանագրով սահմանվող պարտավորությունների ամբողջական կատարման վերջին օրվան հաջորդող 90-րդ աշխատանքային օրը ներառյալ։ Պայմանագրի ապահովումը այն ներկայացրած անձին վերադարձվում է կնքված պայմանագրով ստանձնված պարտավորությունների ամբողջական կատարման դեպքում՝ ամբողջական պարտավորությունների կատարման ժամկետը լրանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում։

Կանխիկ փողի ձևով ներկայացված պայմանագրի ապահովումը պետք է փոխանցվի Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված «900008000664» գանձապետական հաշվին.

- 10.4 Եթե գնման ընթացակարգը կազմակերպված է Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա և պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման պահին նախատեսված չեն ֆինանսական միջոցներ, ապա որակավորման և պայմանագրի ապահովումները ներկայացվում են միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ կանխիկ փողի ձևով։ Եթե պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման պահին նախատեսված ֆինանսական միջոցները գերազանցում են 25 մլն. << դրամը, սակայն պայմանագրի ամբողջական կատարման համար հետագայում ևս պահանջվում են ֆինանսական միջոցներ, ապա պայմանագրի և որակավորման ապահովումները, հատկացված ֆինանսական միջոցների մասով, ներկայացվում են բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի, իսկ պահանջվող ֆինանսական միջոցների մասով՝ միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ կանխիկ փողի ձևով։
- 10.5 Պայմանագրով պատվիրատուի կողմից կանխավճար հատկացվելու պայման նախատեսվելու դեպքում ընտրված մասնակիցը պատվիրատուին է ներկայացնում նաև կանխավճարի ապահովում՝ կանխավճարի չափով, բանկային երաշխիքի ձևով (հավելված՝ 5.2)։
- 10.6 Եթե չափաբաժիններով կազմակերպված գնման ընթացակարգի շրջանակում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հետևանքով որևէ չափաբաժնի մասով լուծվում է, ապա որակավորման և պայմանագրի ապահովումները վճարվում են միայն այդ չափաբաժնի նկատմամբ հաշվարկված գումարի չափով։
- 10.7 Պատվիրատուի ղեկավարը պայմանագրի և որակավորման ապահովման վճարման պահանջը բանկին, իսկ կանխիկ փողի ձևով ներկայացված ապահովման դեպքում՝ լիազորված մարմնին, ներկայացնում է ապահովման վճարման հիմքը առաջանալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում։ Եթե ապահովման վճարման պահանջը բանկի կողմից մերժվում է պահանջը կամ դրան կից փաստաթղթերը ոչ ամբողջական ներկայացված լինելու հիմքով, ապա նոր պահանջը պատվիրատուի ղեկավարը բանկ ներկայացնում է մերժումը ստանալուն հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում։

<sup>13</sup>Եթե գնման հայտով գնվելիք ապրանքի գինը չի գերազանցում 25մլն. ՀՀ դրամը, ապա "բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով" բառերը փոխարիվում են "միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի (հավելված 5.1) կամ կանխիկ փողի ձևով" բառերով, իսկ 3-րդ պարբերության մեջ նշված <<90>> թիվը փոխարինվում է <<20 >> թվով:

<sup>-</sup> ւրվյալ ընթացակարգի շրջանակում կիրառվում է 10.2 կետի 4-րդ պարբերությամբ սահմանված կարգավորումը, ապա 4-րդ և 5-րդ պարբերությունների փոխարեն սահմանվում է հետևյալ պայմանը՝ "Պայմանագրի կատարման յուրաքանչյուր փուլի արդյունքն ընդունվելուց հետո որակավորման ապահովման գումարը նվազեցվում է այդ փուլի գումարի նկատմամբ հաշվարկված համամասնությամբ ։ Երաշխիքի ձևով որակավորման ապահովումը ընդրված մասնակիցը ներկայացնում է 4.1 հավելվածի համաձայն։ ", իսկ հավելված 4-ը հրավերից հանվում է :

#### 11. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ՉԿԱՅԱՑԱԾ ՀԱՅՏԱՐԱՐԵԼԸ

- 11.1 Օրենքի 37-րդ հոդվածի համաձայն՝ հանձնաժողովը սույն ընթացակարգը չկայացած է հայտարարում, եթե՝
  - 1) հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին.
- 2) դադարում է գոյություն ունենալ գնման պահանջը։ Ընդ որում պետության կամ համայնքների կարիքների համար կազմակերպված գնման ընթացակարգը կարող է ամբողջությամբ կամ մասնակի չկայացած հայտարարվել համապատասխանաբար Հայաստանի Հանրապետության կառավարության կամ համայնքի ավագանու, այլ պատվիրատուների դեպքում ընդհանուր կառավարումն իրականացնող լիազորված մարմնի ղեկավարի, իսկ հիմնադրամների դեպքում հոգաբարձուների խորհրդի որոշման հիման վրա :14
  - 3) ոչ մի հայտ չի ներկալացվել.
  - 4) պալմանագիր չի կն<u></u>շվում։
- 11.2 Գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելուն հաջորդող աշխատանքային օրվա ընթացքում, պատվիրատուն տեղեկագրում հրապարակում է հայտարարություն, որում նշվում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու հիմնավորումը։

## 12. ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ (ԿԱՄ) ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ԲՈՂՈՔԱՐԿԵԼՈՒ ՄԱՍՆԱԿՑԻ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԵՎ ԿԱՐԳԸ

12.1 Յուրաքանչյուր շահագրգիռ անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով (այսուհետ՝ Օրենսգիրք) սահմանված կարգով։

Յուրաքանչյուր ոք իրավունք ունի Օրենսգրքով սահմանված կարգով մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը բողոքարկելու գնման առարկալի բնութագրերը կամ հրավերի պահանջները։

- 12.2. Սույն ընթացակարգի հետ կապված հարաբերությունները վարչական հարաբերություններ չեն, և դրանք կարգավորվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիաիրավական հարաբերությունները կարգավորող օրենսդրությամբ։
- 12.3. Պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի կատարած գործողության կամ անգործության հետևանքով պատճառված վնասները հատուցվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով։
- 12.4. Սույն իրավերով սահմանված անգործության ժամկետը պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի գործողությունների (անգործության) և որոշումների բողոքարկման հայցային վաղեմության ժամկետ է, բացառությամբ Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված որոշումների բողոքարկման և պայմանագիրը միակողմանի լուծելու հետ կապված վեճերի, որոնց դեպքում հայցային վաղեմության ժամկետը երեսուն օրացուցային օր է։
- 12.5.Սույն ընթացակարգի հետ կապված վեճերը քննվում և լուծվում են Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում հայցադիմումը վարույթ ընդունելուց հետո՝ երեսուն օրվա ընթացքում։ Դատարանի պատճառաբանված որոշմամբ սույն մասով նախատեսված ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ՝ մինչև տասն օրացուցային օրով։
- 12.6. Դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը լուծում է այն ներկայացվելուց հետո՝ եռօրյա ժամկետում։
- 12.7. Հայցադիմումը վարույթ ընդունելու հետ միաժամանակ դատարանը կայացնում է որոշում՝ պատասխանողից տվյալ գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները պահանջելու մասին։
- 12.8. Ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը կատարվում է պատասխանողի կողմից որոշումն ստանալուց հետո՝ ինցօրյա ժամկետում։

Սույն կետով նախատեսված ժամկետում պատասխանողի կողմից ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշման պահանջները չկատարվելու դեպքում գործը քննվում է դրանում առկա ապացույցների հիման վրա, իսկ հայցվորի վկայակոչած այն փաստերը, որոնք ենթակա են հաստատման պատասխանողի տիրապետման տակ գտնվող ապացույցներով, համարվում են հաստատված։

12.9. Դատարանը սույն գնման գործընթացին վերաբերող՝ սույն բաժնով նախատեսված վեճերի վերաբերյալ իր վարույթում քննվող գործերը միացնում է մեկ վարույթում։

<sup>&</sup>lt;sup>14</sup> Սույն կետր խմբագրվում է ըստ համապատասխան պատվիրատուի։

- 12:10. Հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումն անհապաղ ուղարկվում է լիազորված մարմնի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեին։ Լիազորված մարմինը սույն կետով նախատեսված որոշումն անհապաղ հրապարակում է տեղեկագրում՝ նշելով կասեզման օրը։
- 12.11. Հայցադիմումի պատասխանը պատվիրատուն ներկայացնում է հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում։
- 12.12 Գործին մասնակցող անծինք և նրանց ներկայացուցիչները դատական նիստի ժամանակի և վայրի, ինչպես նաև Օրենսգրքով նախատեսված դեպքերում առանձին դատավարական գործողություններ կատարելու մասին ծանուցվում են էլեկտրոնային հաղորդակցության միջոցով ծանուցագրերը և այլ փաստաթղթեր Օրենսգրքի 97-րդ հոդվածով սահմանված կարգով հայցադիմումում նշված էլեկտրոնային փոստին ուղարկելու եղանակով։
- 12.13. Դատարանը սույն բաժնով նախատեսված վեճերով գործերը քննում և դրանց վերաբերյալ վճիռները և որոշումները կայացնում է գրավոր ընթացակարգով, բացառությամբ այն դեպքերի, երբ դատարանը գործին մասնակցող անձի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ եկել է եզրահանգման, որ անհրաժեշտ է գործը քննել դատական նիստում։
- 12.14. Գործը դատական նիստում քննելու վերաբերյալ միջնորդությունը գործին մասնակցող անձը կարող է ներկայացնել մինչև հայցադիմումի պատասխան ներկայացնելու համար սահմանված ժամկետի լրանալը։
- 12.15. Գործը դատական նիստում քննելու մասին դատարանը կայացնում է որոշում հայցադիմումի պատասխան ներկայացնելու համար սահմանված ժամկետը լրանալուց հետո՝ եռօրյա ժամկետում։
- 12.16. Գործը դատական նիստում քննելու հարցը կարող է լուծվել նաև հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշմամբ։
- 12.17. Վիճարկվող գործողությունների (անգործության) և որոշումների հիմքում ընկած հանգամանքների, ինչպես նաև տվյալ գործողությունների (անգործության) կատարման և որոշման ընդունման օրենքով, այլ իրավական ակտերով սահմանված կարգը պահպանված լինելու փաստերն ապացուցելու պարտականությունը կրում է պատասխանողը։
- 12.18. Պատասխանողը վիճարկվող գործողությունների (անգործության) և որոշումների իրավաչափությունը հիմնավորող ապացույցներ կարող է ներկայացնել միայն ապացույցները պահանջելու որոշման կատարման ընթացքում, բացառությամբ այն դեպքերի, երբ հիմնավորում է ապացույցի ներկայացման անհնարինությունը իրենից անկախ պատճառներով։
- 12.19. Պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների (անգործության) և որոշումների (բացառությամբ Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված որոշումների) բողոքարկումն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ սույն հրավերի 12.10 կետով նախատեսված որոշումը հրապարակվելու օրվանից մինչև վեճի քննության արդյունքներով առաջին ատյանի դատարանի կայացրած եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրը։
- 12.20. Այն դեպքերում, երբ, հանրային կամ պաշտպանության և ազգային անվտանգության շահերից ելնելով, անհրաժեշտ է շարունակել գնման գործընթացը, դատարանը Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված մարմինների ղեկավարների, իսկ իրավաբանական անձանց դեպքում գործադիր մարմնի ղեկավարի գրավոր միջնորդության հիման վրա կայացնում է գնման գործընթացի կասեցումը վերացնելու մասին որոշում։ Դատարանը սույն կետով նախատեսված որոշումը դրա կայացման օրն անհապաղ ուղարկում է լիազորված մարմնի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեին։ Լիազորված մարմինն այդ որոշումն անհապաղ հրապարակում է տեղեկագրում։
- 12.21. Պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների (անգործության) և որոշումների բողոքարկման հետ կապված վեճերով դատարանի եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից։
- 12.22. Պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների (անգործության) և որոշումների բողոքարկման հետ կապված վեճերով դատարանի վճռի եզրափակիչ մասը կամ այլ եզրափակիչ դատական ակտը դրա հրապարակման օրն ուղարկվում է լիազորված մարմնի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեին։ Լիազորված մարմինը դատարանի վճռի եզրափակիչ մասը կամ այլ եզրափակիչ դատական ակտն անհապաղ իրապարակում է տեղեկագրում։
- 12.23. Բողոքարկման համար գանձվող պետական տուրքերի դրույքաչափերը սահմանված են «Պետական տուրքի մասին» օրենքով։

## ՄԱՍ II ՀՐԱՀԱՆԳ

#### ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ Հ Ա Յ Տ Ը Պ Ա Տ Ր Ա Ս Տ Ե Լ ՈՒ

#### 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 1.1 Սույն իրահանգը նպատակ ունի օժանդակել մասնակիցներին հայտը պատրաստելիս։
- 1.2 Նպատակահարմարության դեպքում մասնակիցը պահանջվող տեղեկությունները կարող է ներկայացնել սույն հրահանգով առաջարկվող ձևերից տարբերվող՝ այլ ձևերով՝ պահպանելով պահանջվող վավերապայմանները։
  - 1.3 Հայտերը, հայերենից բացի, կարող են ներկայացվել նաև անգլերեն կամ ռուսերեն։

#### 2. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՅՏԸ

Ընթացակարգին մասնակցելու համար մասնակիցը սույն հրավերի 2-րդ մասի 3-րդ բաժնով սահմանված կարգով ներկայացնում է հայտ։ Հայտին կցվում են սույն հրավերով նախատեսված համապատասխան փաստաթղթերը։

Մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված՝

- 2.1 ընթացակարգին մասնակցելու դիմում-իայտարարություն՝ իամաձայն հավելված N 1-ի.
- 2.2 իր կողմից հաստատված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ համաձայն հավելված N 1.1-ի.
- 2.3 գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները, եթե պայմանագիրն իրականացվելու է գործակալության միջոցով.
- 2.4 համատեղ գործունեության պայմանագիրը, եթե մասնակիցները գնման ընթացակարգին մասնակցում են համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով).<sup>15</sup>
- 2.5 գնային առաջարկ՝ համաձայն հավելված N 2-ի։ Գնային առաջարկը ներկայացվում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով։ Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում։

#### 3. ՀԱՅՏԸ ՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ ԿԱՐԳԸ

3.1 Մասնակիզը հայտը ներկայացնում է սույն հրավերով սահմանված կարգով։

Մասնակցի առաջարկները, դրանց վերաբերող փաստաթղթերը դրվում են ծրարի մեջ, որը սոսնձում է այն ներկայացնողը։ Ծրարում ներառված փաստաթղթերը, կազմվում են բնօրինակից /բացառությամբ 3-րդ կողմի կողմից տրամադրված կամ հաստատված փաստաթղթերի, որոնց դեպքում ներկայացվում է դրանց՝ բնօրինակից պատճենահանված տարբերակը/ և 2 օրինակ պատճեններից։ Փաստաթղթերի փաթեթների վրա համապատասխանաբար գրվում են «բնօրինակ» և «պատճեն» բառերը։ Հայտում ներառվող բնօրինակ փաստաթղթերի փոխարեն կարող են ներկայացվել դրանց նոտարական կարգով վավերացված օրինակները։

Ծրարը և սույն իրավերով նախատեսված՝ մասնակցի կազմած փաստաթղթերն ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս լիազորված անձը (այսուհետ՝ գործակալ)։ Եթե հայտը ներկայացնում է գործակալը, ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ։

- 3.2 Սույն հրահանգի 3.1 կետում նշված ծրարի վրա հայտը կազմելու լեզվով նշվում են՝
- 1) պատվիրատուի անվանումը և հայտի ներկայացման վայրը (հասցեն).
- 2) ընթացակարգի ծածկագիրը.
- 3) «չբացել մինչև հայտերի բացման նիստը» բառերը.
- 4) մասնակցի անվանումը (անունը), գտնվելու վայրը և հեռախոսահամարը։
- 3.3 Սույն իրահանգի 3.1 և 3.2 կետերի պահանջներին չհամապատասխանող հայտերը հանձնաժողովը հայտերի բացման նիստում մերժում է և նույնությամբ վերադարձնում ներկայացնողին։

<sup>&</sup>lt;sup>15</sup> Համաւրեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) մասնակցելու դեպքում հայտում ներառվող՝ մասնակցի կողմից հաստատվող փաստաթղթերը պետք է հաստատված լինեն կոնսորցիումի բոլոր անդամների կողմից։

## ԴԻՄՈՒՄՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ\* գ<mark>նանշման հարցմանը</mark> մասնակցելու

իայտնում է, որ ցվ	անկություն ունի մասնակցել   Հայաստանի պետական տնտեսագիտական
համալսարան ՊՈԱԿ ի կողմից « հ	:ՊՏՀ-ԳՀԱՊՁԲ-23/ԳՈՐԳ-2 » ծածկագրով հայտարարված
գնանշման hարցման չափաբաժնի (չափս	չափաբաժնին (չափաբաժիններին) և հրավերի սբաժինների) համարը
պահանջներին համապատասխան	ս ներկայացնում է հայտ։
ն հայտնում և հայ մասնակցի անվանումը	վաստում է, որ հանդիսանում է
երկրի անվանումը	ւնվիկանու
h`	
— ։ մասնակցի անվանումը	
• հարկ վճարողի հաշվառմե հարկ վճարողի հաշվառման համարը	սն համարն է՝
• Էլեկտրոնային փոստի հատ Էլեկտրոնային փոստի հասցեն	սցեն է՝
գործունեության հասցեն	?
• հեռախոսահամարն է՝	ւա <mark>խոսի համարը</mark>
hեռ	ախոսի համարը
Սույնով <u>-</u> -ն հայտարարում մասնակցի անվանում	í և hավաստում է, որ՝
1) <u>_</u> -ն և իրեն փոխկապակ մասնակցի անվանում	ցված անձինք
բավարարում են <mark>« ՀՊՏՀ-ԳՀԱՊ</mark> Յ	<mark>ԴԸ-23/ԳՈՐԳ-2 »</mark> ծածկագրով <mark>գնանշման հարցման</mark> հրավերով սահմանված
մասնակցության իրավունքի պահս մասնակցի անվանում	սնջներին ևն պարտավորվում է ընտրված
մասնակից ճանաչվելու դեպքում, հ ապահովում . <sup>12</sup>	րավերով սահմանված կարգով և ժամկետում, ներկայացնել որակավորման
2) <b>« ՀՊՏՀ-ԳՀԱՊՁԲ-23/</b> Գ • թույլ չի տվել և (կամ	<mark>ԻՈՐԳ-2 »</mark> ծածկագրով <mark>գնանշման հարցման մաս</mark> նակցելու շրջանակում՝ i) թույլ չի տալու անբարեխիղճ մրցակցություն, գերիշխող դիրքի չարաշահում թյուն,
• բացակայում է հրա	әյnւն, վերnվ սաhմանված՝
փոխկապակցված անձանց և (կամ	)ի մասնակցի անվանումը
կողմից <u>իիմնադրված կամ ավելի</u> ք	ան հիսուն տոկոս

<sup>&</sup>lt;sup>13</sup> Եթե կիրառվում է սույն հրավերի 1 ին մասի 24 կետի 2 րդ նախադասությամբ նախատեսված կարգավորումը, ապա << պարտավորվում ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, հրավերով սահմանված կարգով և ժամկետում, ներկայացնել որակավորման ապահովում.>> բառերը փոխարինվում են << կամ սույն ընթացակարգի շրջանակում վերջինիս կողմից՝ որպես պաշտոնական ներկայացուցիչ, մատակարարվող ապրանքներն արտադրող կազմակերությունը, հայտերը բացելու օրվա դրությամբ ունի միջազգային հեղինակավոր կազմակերպությունների (Fitch, Moodys, <u>Standard & Poor's</u>) կողմից շնորհված վարկումակության վարկանիշ առնվազն Հայաստանի Հանրապետությանը շնորհված սուվերեն վարկանիշի չափով>> բառերով։ Ընդ որում Նշվում է նաև վարկանիշի չափը և վարկումակության վարկանիշ ունեցող կազմակերպության անվանումը։

#### մասնակցի անվանումը

պատկանող բաժնեմաս (փայաբաժին) ունեցող կազմակերպությունների միաժա դեպք։	ւմանակյա մասնակցության
Ստորև ներկայացնում է	րաբերյալ
տեղեկություններ պարունակող կայքէջի հղումը՝	**
Կից ներկայացվում է մասնակցիանվանումը	կողմից առաջարկվող
ապրանքի ամբողջական նկարագիրը՝ համաձայն հավելված 1.1-ի։	
անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը)՝ ստորագրությունը)	Սասնակցի

Ч. S.

<sup>\*\* - &</sup>lt;< ռեզիդենտ հանդիասցող մասնակիցը դիմում հայտարարությունը լրացնելիս նշում է «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքի համաձայն՝ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում գրանցած՝ իր իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջի հղումը՝

<sup>-</sup> Եթե մասնակիցը չի հանդիսանում ՀՀ ռեզիդենտ, ապա դիմում- հայտարարությունը լրացնելիս << տեղեկություններ պարունակող կայքէջի հղումը՝ >> բառերը փոխարինում է <<հայտարարագիր՝ համաձայն՝ հավելված 1,3-ի>> բառերով,

<sup>-</sup>եթե մասնակիցը անհատ ձեռնարկատեր է կամ ֆիզիկական անձ, ապա իրական շահառուների վերաբերյալ տեղեկատվություն չի ներկայացնում:

## ՆԿԱՐԱԳԻՐ առաջարկվող ապրանքի ամբողջական

		ն	« <b>ሩጣՏሩ-</b> ዓሩ <b>Աጣ</b> ՁԲ-23	3/ԳበՐԳ-2 »՝
մասնակցի անվանումը	1			
	նանշման հարցման շրջանակոււ ապրանքի ամբողջական նկարա		ո ստորև ներկայացնո	ում է իր կողմից
Չափաբաժնի		Առաջարկվող ապրանքի		
համար		տեխնիկական բնութագրե		
մասնակցի անվանումը	(ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը)	ստորագրություն		
				Ч. S.
*เกเมอปกเป็ t hเมโบกิโ	uudnaadh piuninginiinh linnisha' ishtisti hi	ามปิธิกา เกิรกริโมมจากเป		

# ΩH.u.

			aug			
	ԻՐԱԿԱՆ ՇԱՀԱՌՈՒՆԵ	የኮ ላ	<mark>ՎԵՐԱԲ</mark> Ե	$rac{1}{3}$	ԱԼ 4	ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԻ
1. Կա	<b>ղմակերպությունը</b>					
1.1.	Կազմակերպության տվյալները					
1.1.1.	Անվանումը					
1.1.2.	Անվանումը լատինատառ					
1.1.3.	Պետական գրանցման համարը					
1.1.4.	Գրանցման օրը, ամիսը, տարին					
1.1.5.	Գրանցման հասցեն					
1.1.6.	Գրանցման պետությունը					
1.1.7.	Գործադիր մարմնի ղեկավարի անունը և վ	ազգա	նունը			
1.2.	Հայտարարագիրը ներկայացնող անձ	פ				
1.2.1.	Հայտարարագիրը ներկայացնող անձի ա	նունը	և ազգանու	նը		
1.2.2.	Հայտարարագիրը ներկայացնող անձի պ	աշտոն	նը			
1.3.	Հայփարարագրի ներկայացումը					
1.3.1.	Հայտարարագրի ստորագրման օրը, ամի	սը, տւ	արին			
1.3.2.	Հայտարարագրի էջերի քանակը					
1.3.3.	Հայտարարագիրը ներկայացնող անձի սա	ոորագ	դրությունը			
2. Բա	<del>յ</del> նետոմսերի ցուցակման տվյալները					
2.1.	Բաժնեփոմսերի ցուցակման փվյալնել	าย				
2.1.1.	Ֆոնդային բորսայի անվանումը					
2.1.2.	Հղումը բորսայում առկա փաստաթղթերին					
2.2.	Կազմակերպությունը վերահսկող իրավաբանական անձի տվյալները					
2.2.1.	Անվանումը					
2.2.2.	Անվանումը լատինատառ					
2.2.3.	Պետական գրանցման համարը					
2.2.4.	Գրանցման օրը, ամիսը, տարին					
2.2.5.	Գրանցման հասցեն					
2.2.6.	Գրանցման պետությունը					
2.2.7.	Գործադիր մարմնի ղեկավարի անունը և ազգանունը					
2.3.	Վերահսկողության մակարդակը					
2.3.1.	Մասնակցության չափը (%)					
2.3.2.	D Ouroud				ցություն	
	Սասնակցության տեսակը 🗆 Անուղղակի մասնակցություն					
	ոության, համայնքի կամ միջազգայի <mark>՝</mark>			ությ	ան մ	ասնակցությունը
	Պետության կամ համայնքի մասնակց	пцәјпі	ւնը			
3.1.1.	Պետության անվանումը					
3.1.2.	Համայնքի անվանումը					
3.1.3.	Մասնակցության չափը (%)					
3.1.4.	Hamadan dan kamada da kara kara kara kara kara kara kar					ասնակցություն ո մասնակցություն
	Միջազգային կազմակերպության մաս		րությունը			
3.2.1.	Միջազգային կազմակերպության անվան					
3.2.2.	Միջազգային կազմակերպության անվան	ու <mark>մը</mark> լս	ստինատաւ	1		
3.2.3.	Մասնակցության չափը (%)					
3.2.4.	Մասնակցության տեսակը					Ուղղակի մասնակցություն Անությունի մասնակցություն

## 4. Իրական շահառուի տվյալները

4.1. Անձի ինքնությունը հավաստող տվյալները

4.1.1.	Անունը	
4.1.2.	Ազգանունը	

Անուղղակի մասնակցություն

4.1.3. Անունը (լատինատառ)			
4.1.4. Ազգանունը (լատինատառ)			
4.1.5. Քաղաքացիությունը			
4.1.6. Ծննդյան օրը, ամիսը, տարին			
4.2. Անձը հասդափող փասփաթուղթը			
4.2.1. Փաստաթղթի տեսակը			
4.2.2. Փաստաթղթի համարը			
4.2.3. Տրամադրման օրը, ամիսը, տարին			
4.2.4. Տրամադրող մարմինը			
1 1 1 1 1 1 1 1 1 1 1 1 1 1 1 1 1 1 1 1			
4.3. Անձի հաշվառման հասցեն			
4.3.1. Պետությունը			
4.3.2. Համայնքը			
4.3.3. Վարչատարածքային միավորը			
4.3.4. Փողոցի անվանումը, շենքը (տունը), բնակարանը			
4.4. Անձի բնակության հասցեն			
4.4.1. Պետությունը			
4.4.2. Համայնքը			
4.4.3. Վարչատարածքային միավորը			
4.4.4. Փողոցի անվանումը, շենքը (տունը), բնակարանը			
4.5. Իրական շահառու հանդիսանալու հիմքերը (բ. հաշվեւրու կազմակերպությունների)	ugunn	ությամբ՝ ընդերքօգտագործման ոլորտի	
🗆 ա. ուղղակի կամ անուղղակի տիրապետում է տվյալ	hount		
- — - ա. ուղղագի գան անուղղագի տրիապեսուն է տվյալ - բաժնեմասերի (բաժնետոմսերի, փայերի) 20 և ավելի տոկու			
ավելի տոկոս մասնակցություն իրավաբանական անձի կան			
4.5.1. Մասնակցության չափը (%)	- "		
10 13 6 12 7		Ուղղակի մասնակցություն	
2. Մասնակցության տեսակը			
🗆 բ. տվյալ իրավաբանական անձի նկատմամբ իրակ։			
միջոցներով	,	317 1 1 11 317	
🗆 գ. հանդիսանում է տվյալ իրավաբանական անձի գւ			
իրականացնող պաշտոնատար անձ այն դեպքում, երբ առկ	ա չէ «ա	ա» և «բ» կետերի պահանջներին	
իամապատասխանող ֆիզիկական անձ			
4.6. Իրական շահառու հանդիսանալու հիմքերը (ըն	ւդերքն	օգւրագործման ոլորւրի ռաշվետու	
կազմակերպությունների համար)			
🗆 ա. ուղղակի կամ անուղղակի կերպով տիրապետում			
բաժնեմասերի (բաժնետոմսերի, փայերի) 10 և ավելի տոկու			
տոկոս մասնակցություն իրավաբանական անձի կանոնադր	ական	ւ կապիտալում	
164 15 5 1 100			
4.6.1. Մասնակցության չափը (%)			
		Ուղղակի մասնակցություն	
4.6.2. Մասնակցության տեսակը		Մնուղղակի մասնակցություն	
🗆 բ. իրավունք ունի նշանակելու կամ հեռացնելու իրա			
անդամների մեծամասնությանը			
🗆 գ. իրավաբանական անձից անհատույց ստացել է հ	աշվետ	ոու տարվան նախորդող տարվա ընթացքում տվյալ	
իրավաբանական անձի ստացած շահույթի առնվազն 15 տո	կոսի չս	ափով օգուտ	
🗆 դ. իրավաբանական անձի նկատմամբ իրականացն	ւում է ի	իրական (փաստացի) վերահսկողություն այլ	
միջոցներով			
🗅 ե. հանդիսանում է տվյալ իրավաբանական անձի գործունեության ընդհանուր կամ ընթացիկ ղեկավարումն			
իրականացնող պաշտոնատար անձ այն դեպքում, երբ առկա չէ «ա»–«դ» կետերի պահանջներին համապատասխանող     Ֆեզեկական անձ			
ֆիզիկական անձ 4.7. Իրական շահառուի կարգավիճակի վերաբերյալ տեղեկությունները			
4.7. Суничин ганштар чирчичрашур чаршевру	սլ կյնղ	ղսգույթյուսսսիը	
4.7.1. Իրական շահառու դառնալու օրը, ամիսը, տարին			
4.7.2. Կազմակերպության նկատմամբ վերահսկողության		🗆 Առանձին	
իրականացումը		📗 🗆 Փոխկապակցված անձանց հետ համատեղ	

_				
	նդերքօգտագործման ոլորս			Ալո
	ոպության իրական շահառո	• •		ωjii Nչ
	ւտար անձ կամ նրա ընտան	• • • • • • • • • • • • • • • • • • • •		
_	ոական շահառուի կոնւրվ	սկփային փվյալները		
-	. փոստի հասցեն			
4.8.2. <i< td=""><td>եռախոսահամարը</td><td></td><td></td><td></td></i<>	եռախոսահամարը			
	նկյալ իրավաբանական			
<u>5.1. 4</u> 0	ազմակերպության փվյալ	ները		
5.1.1. U	նվանումը			
5.1.2. U	նվանումը լատինատառ			
5.1.3.     ୩	<mark>լետական գրանցման համ</mark> ս	որը		
5.1.4. <b>9</b>	րանցման օրը, ամիսը, տալ	ոին		
5.1.5. Գրանցման հասցեն				
5.1.6. <b>9</b>	.1.6. Գրանցման պետությունը			
5.1.7. Գործադիր մարմնի ղեկավարի անունը և ազգանունը				
5.2. h	ոական շահառուի ւրվյալ	ները		
	րական շահառու(ներ)ի			
	րազան շարառուզսերյը ազգանունը, ում համար			
	ազգասուսը, ուս դասար ոպությունը հանդիսանում			
	ալ իրավաբանական անձ			
		t (+i - i() - C   - i		5 6
		<u>ան անձի բաժնեփոմսերի ց</u>	ցուցակւ	ման փվյալները
	ոնդային բորսայի անվանո	_		
	ղումը բորսայում առկա փա	ստաթղթերին		
	յուցիչ նշումներ			
		վելյալ պարզաբանումներ, որո	ւնք առնչ	չվում են հայտարարագրում լրացված կամ
լրացման t	ենթակա տվյալներին			

#### I. Հայտարարագրի լրացման կարգը

- 1. Հայտարարագրի 1-ին բաժնում (Կազմակերպությունը) լրացվում են հայտարարագիր ներկայացնող իրավաբանական անձի (այսուհետ՝ Կազմակերպություն) տվյալները։ Այս բաժնում ենթաբաժինները լրացվում են հետևյալ կանոններով
- 1)«Կազմակերպության տվյալները» ենթաբաժնում լրացվում են Կազմակերպության անվանումը (այդ թվում՝ լատինատառ) և պետական գրանցման տվյալները՝ ներառյալ նշում կազմակերպաիրավական ձևի մասին.
- 2) «Հայտարարագիրը ներկայացնող անձը» ենթաբաժնում լրացվում է այն ֆիզիկական անձի տվյալները ով ստորագրում է սույն ընթացակարգի հայտում ներառվող փաստաթղթերը.
- 3) «Հայտարարագրի ներկայացումը» ենթաբաժնում լրացվում են հայտարարագրի ստորագրման օրը, ամիսը, տարին, հայտարարագրի էջերի քանակը, ինչպես նաև դրվում է հայտարարագիրը ներկայացնող անձի ստորագրությունը։
- 2. Հայտարարագրի 2-րդ բաժինը (Բաժնետոմսերի ցուցակման տվյալները) լրացվում է, եթե Կազմակերպության կամ Կազմակերպությունն ամբողջությամբ վերահսկող այլ իրավաբանական անձի բաժնետոմսերը ցուցակված են Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի կողմից հաստատված՝ իրական շահառուների համարժեք բացահայտման չափանիշներով կարգավորվող շուկաների ցանկում ներառված շուկայում։ Նշված չափանիշներին համապատասխանելու դեպքում այս բաժինը լրացվում է Կազմակերպության կամ Կազմակերպությունն ամբողջությամբ վերահսկող այլ իրավաբանական անձի համար։ Այս բաժինը լրացնելու դեպքում հայտարարագրի հաջորդ բաժինները ենթակա չեն լրացման, բացառությամբ 5-րդ բաժնի, որը լրացվում է, եթե Կազմակերպությունն ամբողջությամբ վերահսկող իրավաբանական անձը Կազմակերպության կանոնադրական կապիտալում ունի անուղղակի մասնակցություն։ Այս բաժնում ենթաբաժինները լրացվում են հետևյալ կանոններով.
- 1)«Բաժնետոմսերի ցուցակման տվյալները» ենթաբաժնում լրացվում է ֆոնդային բորսայի անվանումը՝ փակագծերում նշելով նաև բորսայի ծածկագիրը (Market Identifier Code), որտեղ ցուցակված են Կազմակերպության կամ Կազմակերպությունն ամբողջությամբ վերահսկող այլ իրավաբանական անձի բաժնետոմսերը, ինչպես նաև կատարվում է հղում բորսայում առկա փաստաթղթերին՝ առկայության դեպքում այն փաստաթղթերին, որոնք պարունակում են տեղեկություններ տվյալ իրավաբանական անձի սեփականատերերի վերաբերյալ.

- 2) «Կազմակերպությունը վերահսկող իրավաբանական անձի տվյալները» ենթաբաժինը լրացվում է, եթե հայտարարագրի 2.1-ին ենթաբաժնում լրացված տվյալները վերաբերում են ոչ թե հայտարարագիրը ներկայացնող իրավաբանական անձին, այլ Կազմակերպությունն ամբողջությամբ վերահսկող այլ իրավաբանական անձի։ Այս ենթաբաժնում լրացվում են Կազմակերպությունը վերահսկող իրավաբանական անձի անվանումը (այդ թվում՝ լատինատառ) և գրանցման տվյալները՝ ներառյալ նշում կազմակերպաիրավական ձևի մասին, ինչպես նաև գործադիր մարմնի ղեկավարի անունը և ազգանունը.
